

Արձանագրություն №15/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. հունիսի 25-ին տեղի ունեցած թիվ 15 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 71-ը (յոթանասունմեկը): Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դեկանի պաշտոնի ընտրության մասին ֆակուլտետային գիտական խորհրդի ընդունած որոշման հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյան)
2. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
3. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
4. Մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԳԽ որակի ապահովման մշտ. հանձ. նախագահ Է.Ս.Գևորգյան)

Ընթացիկ հարցեր

5.1. «Բարձրամոլեկուլային միացություններ» (հեղ.՝ պրոֆ. Վ.Գ. Բարխուդարյան) աշխատանքը որպես ուսումնական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու մասին:

5.2. «Սովորում ենք արաբերեն» (Սկսնակ առաջին (A1) մակարդակ)» (հեղ.՝ Բ.Գ.Թ. Ս. Տոնիկյան, Ս. Յովսեփեան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

5.3. «Խոսենք արաբերեն» (Սկսնակ երկրորդ (A2) մակարդակ) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Թ., դոցենտ Սոնա Տոնիկյան և Բ.Գ.Թ., դոցենտ Ալիս Էլոյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

5.4. «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Հ. Բաղդասարյան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին** – Ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության՝ ֆակուլտետային գիտխորհրդի որոշման հաստատման մասին: Բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեց քիմիայի ֆակուլտետի ղեկանի պաշտոնի հավակնորդի մասին ամփոփ տվյալներ:

Դեկանի պաշտոնի հավակնորդն էր.

Գ/Գ	ԱԶԱՐԿԱՐԿԱՅՐԱՐԿ	ՊԵՏՈՐ
1.	Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի	Քիմիայի ֆակուլտետի ղեկան

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 71 անդամներից 62-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Գ/Գ	ԱԶԱՐԿԱՐԿԱՅՐԱՐԿ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ֆակուլտետի ղեկանի պաշտոնի հավակնորդ				
1.	Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի	55	3	4

Որոշեցին. – Հաստատել փակ, գաղտնի առցանց քվեարկության արդյունքները:

Ընտրված ղեկանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն ԵՊՀ ֆակուլտետի ղեկանի մրցութային ընտրության պաշտոնների տեղակալման մասին ընթացակարգի:

2. **Լսեցին.** - Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին ամբիոնների վարիչների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մկրտչյան Մարինե Մարգարի	Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ
2.	Սուվարյան Սեյրան Ռաֆիկի	Մերվիսի ամբիոնի վարիչ
3.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	Թյուրքագիտության ամբիոնի վարիչ
4.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	Կենդանաբանության ամբիոնի վարիչ
5.	Աբաջյան Աննա Հենրիկի	Հայոց լեզվի պատմության ամբ. վարիչ
6.	Գրիգորյան Սեյրան Զավենի	Հայ նորագույն գրականության ամբ. վարիչ
7.	Զրբաշյան Աշխեն Էդուարդի	Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ
8.	Խաչատրյան Խաչատուր Աղավարդի	Դիֆերենցիալ հավասարումների ամբ. վարիչ
9.	Ագլյան Վահագն Ռոբերտի	Հանրային կառավարման ամբիոնի վարիչ
10.	Եղիազարյան Արման Սամվելի	Միջուկաբանության ամբիոնի վարիչ
11.	Պետրոսյան Համլետ Լենսերի	Մշակութաբանության ամբիոնի վարիչ

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 71 անդամներից 62-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
-----	-----------------------------	------	-----	---------

1.	Մկրտչյան Մարինե Սարգսի	53	2	5
2.	Սուվարյան Սեյրան Ռաֆիկի	48	7	4
3.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	57	2	1
4.	Առաքելյան Մարինե Մեմյոնի	53	4	3
5.	Աբաջյան Աննա Հենրիկի	52	5	3
6.	Գրիգորյան Սեյրան Զավենի	55	3	2
7.	Զրբաշյան Աշխեն Էդուարդի	57	3	1
8.	Խաչատրյան Խաչատուր Ադավարդի	55	4	3
9.	Ազյան Վահագն Ռոբերտի	53	5	3
10.	Եղիազարյան Արման Սամվելի	55	2	3
11.	Պետրոսյան Համլետ Լենսերի	53	2	6

Որոշեցին. - Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները, և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. **Լսեցին.** - Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին պրոֆեսորի, դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ.

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	°ՕՇԳ ^{31/2} նՄ ³ Յ ² նՄ ³ Յ ² Ս ¹ »ԷՇ	ë÷Մáðéù ³ .ՇիáðÃՄ ³ Յ ³ Ս ³ ՇáÝՇ ³ íñՇã
2.	¶ÉëiՄ ³ Յ ³ É ³ ãՇİ ³ é ³ Ս ¹ »ԷՇ	ù ³ Õ ³ ն ³ Յ ³ Յ ³ ·ՇիáðÃՄ ³ Յ ³ á ³ iՄáðÃՄ ³ Յ ³ .. i»ëáðÃՄ ³ Յ ³ ³Ս ³ ՇáÝՇ ³ 'áó»Ý ³ i
3.	Մարգարյան Աննա Ռազմիկի	քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
-----	-----------------------------	---------

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

4. **Լսեցին.** – Մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատման մասին: Գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյանը տեղեկացրեց, որ 3 ֆակուլտետներից ներկայացվել են մագիստրոսական 7 նոր կրթական ծրագրեր, որոնք քննարկվել են հանձնաժողովի նիստում, անցել կրթական ծրագրերի հաստատման ընթացակարգերը և ստացել դրական եզրակացություն: Իրավագիտության ֆակուլտետից ներկայացված ծրագրերն են՝ «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն», «Քրեական արդարադատություն և փաստաբանություն», «Դատական իրավունք և փաստաբանություն», «Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ», «Համալիր իրավական հետազոտություններ»: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետից ներկայացվել է «Մաթեմատիկա և կիրառություններ», իսկ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետից՝ «Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա» մագիստրոսական ծրագիրը:

Որոշեցին.- Հաստատել մագիստրոսի կրթական հետևյալ ծրագրերը՝ «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն», «Քրեական արդարադատություն և փաստաբանություն», «Դատական իրավունք և փաստաբանություն», «Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ», «Համալիր իրավական հետազոտություններ», «Մաթեմատիկա և կիրառություններ», «Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա»:

5.1.**Լսեցին.** – «Բարձրամուլեկուլային միացություններ» աշխատանքը (հեղ.՝ Վ.Գ. Բարխուդարյան) որպես ուսումնական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու մասին: Քիմիայի ֆակուլտետի դեկան Տարիել Ղոչիկյանն իր մտահոգությունը հայտնեց աշխատանքի վերաբերյալ՝ նկատելով, որ դրանում առկա են սխալներ և չկան մասնագիտական գրախոսություններ: Վերջինս տարակուսանք հայտնեց, որ ֆիզիկայի ոլորտի մասնագետի կողմից է պատրաստվում ձեռնարկը, որը նախատեսված է քիմիայի ուսանողների համար: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց հարցը հանել օրակարգից և աշխատանքը ներկայացնել մասնագիտական գրախոսման՝ հետագայում ավելի առարկայական քննարկում ունենալու նպատակով:

Որոշեցին.- Հարցը հանել օրակարգից և աշխատանքը ներկայացնել մասնագիտական գրախոսման:

5.2.Լսեցին. - «Սովորում ենք արաբերեն» (Սկսնակ առաջին (A1) մակարդակ)» (հեղ.՝ Բ.Գ.Թ. Ս. Տոնիկյան, Ս. Յովսեփեան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ աշխատանքը ներկայացվել է արևելագիտության ֆակուլտետից, առկա են մասնագիտական գրախոսներ, և այն ֆակուլտետում վերջին տարիներին իրականացվող դասագրքաստեղծման գործընթացի մաս է կազմում:

Որոշեցին. - «Սովորում ենք արաբերեն» (Սկսնակ առաջին (A1) մակարդակ)» (հեղ.՝ Բ.Գ.Թ. Ս. Տոնիկյան, Ս. Յովսեփեան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

5.3.Լսեցին. - «Խոսենք արաբերեն» (Սկսնակ երկրորդ (A2) մակարդակ) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Թ., դոցենտ Սոնա Տոնիկյան և Բ.Գ.Թ., դոցենտ Ալիս Էլոյան) հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Խոսենք արաբերեն» (Սկսնակ երկրորդ (A2) մակարդակ) աշխատանքը (հեղ.՝ Բ.Գ.Թ., դոցենտ Սոնա Տոնիկյան և Բ.Գ.Թ., դոցենտ Ալիս Էլոյան) երաշխավորել հրատարակության և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

5.4.Լսեցին. - «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Հ. Բաղդասարյան, Մ. Մարտիրոսյան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» (հեղ.՝ Բ.Գ.Պ., դոցենտ Հ. Բաղդասարյան, Մ. Մարտիրոսյան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Օրակարգային հարցերի սպառումից հետո արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանն առաջարկեց անդրադառնալ ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված եկամտային հարկի վերադարձի ձևով փոխհատուցվող մասնագիտությունների ցանկում հայագիտական առարկաների բացակայության հարցը, ինչպես նաև՝ դիրքորոշում հայտնել ԱԺ պատգամավոր Լ. Բաղայանի՝ ԱԺ ամբիոնից ունեցած ելույթի վերաբերյալ, որում առկա են վիրավորական ու կոպիտ շեշտադրումներ դասախոսական հանրային նկատմամբ: Ըստ նրա՝ եկամտային հարկի հաշվին ուսման վարձավճարի փոխհատուցվող մասնագիտությունների հաստատված ցանկը և մի շարք մասնագիտությունների բացակայությունը հստակ բացատրություն չունի: Ռեկտորի Ժ/պ

Գ. Գևորգյանը ի պատասխան նկատեց, որ պատրաստ է պատմության, հայ բանասիրության, ժուռնալիստիկայի ֆակուլտետների դեկանների կողմից համապատասխան գրության ներկայացման դեպքում դրանք ստորագրել համալսարանի անունից: Բարձրացված երկրորդ առաջարկի վերաբերյալ Գ. Գևորգյանը նշեց, որ ծանոթ չէ այդ հայտարարությանը, հարցն ընդգրկված չէ օրակարգում և քննարկման կարիք չի տեսնում: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, իր անհամաձայնությունը հայտնելով ռեկտորի Ժ/պ-ի մոտեցմանը, փաստեց, որ հայտարարությունը հնչել է ոչ թե պատահական մարդու, այլ իշխող խմբակցության պատգամավորի կողմից՝ անհրաժեշտ համարելով ԵՊՀ-ի կողմից համապատասխան արձագանքը հայտարարության տեսքով: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը, լուրջ խնդիր համարելով պատգամավորի ելույթը, պարտադիր համարեց Համալսարանի կողմից դրան արձագանքելու անհրաժեշտությունը: Ա. Ավետիսյանը առցանց քննարկման ընթացքում հասանելի դարձրեց պատգամավորի ելույթը, որից հետո ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանն ասաց, որ իր վերաբերմունքն ավելի կոշտ է, քանի որ, ըստ էության, պատգամավորը մեղադրում է համալսարանականներին նաև կաշառակերության մեջ՝ առաջարկելով ձևավորել հանձնաժողով, կազմել հայտարարության տեքստի նախագիծ և քննարկման ներկայացնել գիտական խորհրդում: Առաջարկված հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Գ. Ղազինյանը, Ռ. Մելքոնյանը և Ա. Ավետիսյանը: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը հարց ուղղեց, թե արդյո՞ք պատգամավորի ելույթը համալսարանին է վերաբերում, թե՞ ողջ բուհական համակարգին, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ ձևավորված ավանդույթի համաձայն՝ բուհական համակարգի մասին որևէ բան ասելիս հանրության շրջանում ընկալում են հենց Համալսարանը: Վ. Դումանյանը, անընդունելի համարելով պատգամավորի ելույթը, նշեց, որ պետք է կոնկրետ բուհ և անուն-ազգանուններ նշվեն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

29.06.2020թ.